

Հարց

Քանի՞ օրվա ընթացքում է թույլտվություն ունեցող Անձը պարտավոր դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ Թույլտվության վերաձեւակերպման համար:

Պատասխան

Ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող Անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Թույլտվություն ունեցող Անձը պարտավոր է այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15 օրվա ընթացքում, դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ Թույլտվության վերաձեւակերպման համար, կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը: